

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԵՄՆԵՐ
ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ ԵՒ ԸՆԾԱՑԱՐԱՆ
ՍՐՐՈՑ ԹԱՐԳՄԱՆԶԱՑ ԱԶԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Արթոց Թարգմանչաց Վարժարանի Մանկապարտեզի կարմիր գոգնոցաւոր փոքրիկները կատարեցին իրենց պարի, երգի եւ արտասանութեան բաժինները, գուարեացնելով իրենց ծնողքը եւ ներկաները, Մայիս 28, 1995, Կիրակի յետ միջօրէին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ:

Նախագահութեամբ Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր, եւ ներկայութեամբ Միաբան Հայերու, ուսուցիչներու, ծնողներու եւ հանդիսատես ժողովուրդի, Նախակրթարանի եւ Երկրորդական Վարժարանի ուսանողները եւ Շրջանաւարտ դասարանը, Յունիս 4, 1995ին երգերով, արտասանութեամբ եւ Կովիտասի մասին ատենախօսութեամբ, նոյն յայտագիրը մը ներկայացուցին, եւ ստացան իրենց մրցանակները եւ Շրջանաւարտից վկայականները, ըստ վարժարանի տեսուչ՝ Գեորգ. Տ. Կիրեղ Սպա. Գաբիկեանի տեղեկատուութեան:

Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի աշակերտներ, Յունիս 6ին, հանդէս եկան դաշնամուրի դասական եւ արդի հեղինակներէն կատարումով, մենբրգի նուագակցութեամբ, խմբերգներով, արտասանութեամբ, ռեզերմով եւ երաժշտագիտութիւն յայտնելով իրենց տրուած դաստիարակութեան համար: Զ.

դասարանէն տասներկու աշակերտներ ստացան իրենց Շրջանաւարտի վկայականը:

Ընծայարանի Դ. դասարանի սարկաւազներ իրենց աւարտաճառերը ներկայացուցած են: Ի մօտոյ պիտի կատարուի իրենց բաժնայական ձեռնադրութիւնը: Հանդէսին բացման խօսքը կատարեց Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի վերատեսուչ Գեորգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեանը գնահատելով տարուան ընթացքին ձեռք բերուած լաւ արդիւնքները աշակերտներուն, ուսուցիչներուն եւ հսկիչներուն կողմէ: Իսկ Հոգ. Տ. Բագրատ Արք. Պարեգեան, իբրեւ Տեսուչ Վարժարանին, տարեկան տեղեկագրով ներկայացուց մանրամասնութիւնները տարուած աշխատանքին:

Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, Միաբանութեան անդամներուն հետ, մասնակցեցաւ Ա. Թարգմանչաց Վարժարանի շրջանաւարտներուն ի պատիւ տրուած ճաշկերոյթներուն, Հ.Յ.Միութեան եւ Հ.Օ.Միութեան վարչութեանց կարգադրութեամբ, իրենց ակումբներու սրահներում մէջ, երգի, արտասանութեան, նուագի եւ խօսքի հանդիս յայտագիրով: Շրջանաւարտները իրենց երաժշտագիտութիւնը յայտնեցին իրենց ծնողաց, ուսուցիչներուն եւ վանական իշխանութեան, իրենց ստացած հայեցի դաստիարակութեան համար: